ԼՈՒՍԻՆԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՎԱՏԱԼԻՔՆԵՐՈՒՄ ԵՎ ՍՈՎՈՐՈՒՅԹՆԵՐՈՒՄ

(XIX դ. վերջ—XX դ. սկիզբ)

ՆՎԱՐԴ ԵՐՆՋԱԿՅԱՆ

Հայ գյուղացին XIX դ. սկզբներին դեռևս շարունակում էր օրերի հաշիվը պահել ըստ լուսնի փուլերի, թեև գոյություն ունեին կանոնիկ օրացույցներ[1]*։ Ամսվա հաշիվը սկսվում էր լուսնի փոքր փուլից, որը կոչվում էր* նոր[2]*։ Փոքր փուլի վերջը կոչվում էր* ճնթռfել[3]*, իսկ լուսնային շրջանի երկրորդ կեսը՝* փուլ[4]*։ Լուսնի փուլերի որոշման ժողովրդական եղանակներից ուշագրավ էր հետևյալը. մարդիկ մի աչքը փակում էին և ցուցամատով սեղմելով մյուսի կոպը, նայում լուսնին։ Նշմարվող ճյուղավորումների քանակը «համապատասխանում էր» տվյալ լուսնային շրջանի օրերի թվին*[5]*։*

Առօրյա տնտեսական գործեր վարելիս գյուղացիները, հաճախ, կողմնորոշվում էին լուսնի փուլերով և ոչ թե ամսաթվերով։ Ի տարբերություն վերջինների, որ անհրաժեշտ էին միայն օրացուցային տոների ճիշտ ժամկետն իմանալու համար (զատիկ, պաս, բարեկենդան և այլն) և հիմնականում իմանում էին քահանաներից, լուսնի փուլերն ու օրերը գիտեր յուրաքանչյուրը։ Ըստ հայկական ժողովրդական պատկերացումների, լուսնային օրերից էր կախված որևէ գործի (օրինակ՝ ցանք, մրգատու ծառերի տունկ, հարսանիք, ճանապարհորդություն) հաջող կամ անհաջող ընթացքն ու ելքը։ Երազները

---

1 *Սա խոսում է հայերի մեջ լուսնային օրացույցի գոյության վարկածի օգտին։ Հետաքրքիր է նշել, որ հայերեն* կաղանդ *(հմմտ. լատ.* calendae*՝ նորալուսնի օրեր, տե՛ս* Э. Бикерман, Хронология Древнего Мира, М., 1975, *էջ 36) նշանակում է ամսվա առաջին օրը ըստ լուսնային օրացույցի (*Անանիա Շիրակացի, Տիեզերագիտություն *Ի տոմար, Երևան, 1940, էջ 69)։*

2 *Ա.* Հարությունյան, *Տարոնի ազգագրությունը, էջ 437 («Հնագիտության և ազգագրության ինստիտուտի ազգագրության բաժնի արխիվ», այսուհետև՝ ԱԲԱ)։ Ուշագրավ է, որ ռուսերեն* новый*-ը նախապես նշանակել է* նորալուսին *կամ* նոր պտուղներ*. հետագայում ստացել է* նոր*-ի* (новый) *իմաստը* (А. Е. Супрун, Системность лексики и этимологии. «Этимология-1967», М., 1969, *էջ 91), որպես և կատարվել է հայերեն* նոր*-ի հետ։ Վերջինիս մասին մանրամասն տե՛ս Ա. Ա.* Օգարաշյան, *Նավասարդյան տոնախմբությունների վերապրուկները («Պատմա-բանասիրական հանդես», 1974, № 4, էջ 114)։*

3 *Ա.* Հարությունյան, *նշվ. աշխ., էջ 437,* Հ. Աճառյան, *Գավառական բառարան («Էմինյան ազգագրական ժողովածու» (այսուհետև՝ ԷԱԺ), հ. IX, Թիֆլիս, 1913, էջ 668)։*

4 *Ա.* Հարությունյան, *նշվ. աշխ., էջ 437։*

5 *Ա.* Հարությունյան, *նշվ. աշխ., էջ 436։ Հետաքրքիր է նշել, որ Շատախում գրանցվել է, այսպես ասած՝ լուսնի օրերի հաշվարկման գիտական բացատրությունը, այն է՝ տարվա վերագիրի, տարեթվի և ամսաթվի գումարումով (*Ռ. Գարունյան, *Շատախի ազգագրությունը, ԱԲԱ, էջ 249)։*

նույնպես «լավ» կամ «վատ» էին համարվում ըստ լուսնային օրերի[6]։ Լուսնի այս կամ այն վիճակը կամ դիրքը եղանակը կանխագուշակելու ազդակ էր։ Լուսնի սկավառակի շուրջը հայտնվող շրջագծերը համարվում էին եղանակը վատանալու նշաններ[7]։ Զանգեզուրում եղանակը կանխագուշակում էին լուսնի մահիկի դիրքով. դեպի ներքև թեքված լուսնի եղջյուրները երաշտի նշան էին, իսկ սուր ծայրերով վերև ուղղված լուսնի մահիկը՝ առատ անձրևների[8]։ Սակայն հայկական ժողովրդական հավատալիքներում գուշակության ինստիտուտը կապվում էր լուսնի ոչ միայն «ֆիզիկական» դիրքի հետ։ Մասնավորապես ուշադրության արժանի է Հարքում գրանցված հետևյալ տեղեկությունը։ Գուշակելու ձիրք կարող էր ձեռք բերել այն մարդը, որն ամբողջ գիշեր նստում էր սեպտեմբերյան լուսնի ներքո, և որը կոչվում էր «Հովալուսին» (ավագ լուսին)[9]։ Հավատում էին, որ եթե կարմիր շորեր հագած նստեն վառվող մոմի վրա շրջված պղնձին (կաթսա) և հայելու մեջ ակնդետ նայեն լուսնին, ականատես կլինեն մղձավանջային տեսարանների, իսկ լույսը բացվելուն պես կիմաստնանան և կդառնան գուշակ։ Ինչպես տեսնում ենք, ժողովրդական ընկալմամբ, գուշակության ձիրքը կապվելով լուսնի «զորության» հետ՝ պայմանավորված էր նաև արհեստականորեն առաջացող վիճակով (տվյալ դեպքում՝ տեսողական խաբկանքներով)[10]։

Համշենցիների մեջ առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում լուսնային ամսվա շրջանի ժողովրդական բաժանումը «բարեհաջող» և «անբարեհաջող» օրերի։ «Անբարեհաջող» էին համարվում լուսնային ամսվա 9-ը, 19-ը և 29-ը։ Այդ օրերին տաբու էր դրված հայ գյուղացու թե՛ տնտեսական, թե՛ սոցիալական կյանքի մի շարք գործողությունների վրա (արգելվում էր ցանք կամ հարսանիք անելը), ինչպես նաև հիվանդներից արյուն չէին բաց թողնում, քանի որ ըստ գոյություն ունեցող ավանդույթի, նրանք կարող էին խելքները կորցնել։ «Անբարենպաստ» էին համարվում նաև նորալուսնին հաջորդող առաջին չորեքշաբթին և ուրբաթը։ Սրան հակառակ «բարեհաջող» էին նորալուսնին հաջորդող երկրորդ չորեքշաբթին և ուրբաթը, ինչպես նաև ամսի 1-ը, 11-ը և 21-ը։ Այդ օրերին ցանկալի էր ցանք անել կամ զբաղվել մրգատու ծառերի տնկմամբ, քանի որ մեկ տարուց հետո արդեն կարող էին բերք հավաքել[11]։

Չնայած վերը ներկայացված լուսնային ցիկլի հակասական ժամանակային օրինաչափություններին, ըստ էության, նորալուսինը հայկական ժողովրդական հավատալիքներում ավելի բարենպաստ ժամանակաշրջան էր

---

6 Հ. Մուրադյան, Համշենցի հայեր («Ազգագրական հանդես» (այսուհետև՝ ԱՀ), Զ, Թիֆլիս, 1900, էջ 112)։

7 Գ. Գեորգյան, Աշտարակի ազգագրությունը, ԱԲԱ, էջ 74։

8 Հեղինակի գրանցած 1977 թ. դաշտային նյութերից, ԱԲԱ, տետր № 1 (Սիսիանի շրջան, Լոր գյուղ)։

9 Բենսե, Բուլանըխ կամ Հարք գավառ (ԱՀ, Զ, Թիֆլիս, 1900, էջ 32—33)։ Ըստ Հ. Աճառյանի, օգոստոս ամսվա լուսինը կոչվում էր ճովան (ԷԱԺ, էջ 661)։ Վերապրուկային ձևով մեզ հասած այս տեղեկությունները, անշուշտ, կապված են եղել տոմարական տիեզերագիտական նախնական գիտելիքների հետ, որոնց քննությունը դուրս է մեր խնդիրներից։

10 Գուշակության ձիրքը շատ մշակույթներում է առնչվում արհեստականորեն առաջացող ոչ բնական վիճակի հետ, օրինակ՝ շամանների արհեստականորեն առաջացվող հալյուցինացիաները (В. В. Иванов, Очерки по истории семиотики в СССР, М., 1976, էջ 24—25)։

11 Հ. Մուրադյան, նշվ. աշխ., էջ 111։

համարվում, քան լիալուսինը[12]։ Նորալուսնի՝ իբրև «բարենպաստ» ժամանակաշրջանի, ժողովրդական ընկալմամբ էլ բացատրվում է մի շարք հմայական գործողությունների համալիրը, որ նպատակամղված էր հարստության կուտակմանը, անձնական գործերում հաջողակ լինելուն, առողջության ամրապնդմանը և այլն։ Հավատում էին, որ նորալուսնի ժամանակ տեսած առաջին առարկան իրենց կհանդիպի ամբողջ ամսվա ընթացքում։ Այս համոզմամբ էլ լուսինը նորելիս նայում էին գրամի կամ համբուրում էին այն ու դնում ճակատին[13]։ Ըստ ժողովրդական պատկերացումների «հաջողակ» համարվող մարդուն այդ օրերին հանդիպելը հաջողություն էր խոստանում ամբողջ ամսվա համար[14]։

Վերը ներկայացված ազգագրական տեղեկությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ եթե մի դեպքում հմայական գործողությունը իրագործվում էր ամբողջական շփման միջոցով, մյուս դեպքում՝ բավարար էր համարվում միայն հայացքը տվյալ առարկային ուղղելը։ Այսպիսով, նայելով «աճող» լուսնին, ապա որևէ առարկայի՝ կարծում էին հայացքով տվյալ առարկային կփոխանցեն լուսնի «հատկանիշները»[15]։ Ազգագրական աղբյուրներից հայտնի են նաև հետևյալ հմայական գործողությունները։ Նորալուսնի ժամանակ երկաթի կտոր էին դնում ատամների տակ, որպեսզի վերջիններս ամրանան, կամ էլ կտրում էին մազերի ծայրից, հուսալով, որ դրանք կաճեն նորած լուսնի նման[16]։

Վերը ասվածից կարելի է հետևցնել, որ հայերի ժողովրդական հավատալիքներում «երիտասարդ», «աճող» լուսնին վերագրվում էին մարդկանց կամ առարկաներին որոշակի հատկանիշներ հաղորդելու հմայական ունակություններ։ Նորալուսնի «բարենպաստ» ժամանակաշրջան լինելու առումով ուշագրավ է մեր օրերում տակավին առկա այն պատկերացման վերապրուկը, որ իբր նորած լուսնի օրերին ծնված երեխան լինում է քաջ, ճարպիկ և երկարակյաց, իսկ տասնհինգօրյա լուսնի ժամանակ ծնվածը՝ թույլ և հիվանդոտ[17]։

Գոյություն ունի նորալուսնի հետ առնչվող ժողովրդական հավատալիքների և սովորությունների համալրի մեկ այլ խումբ, որը գործառնական առումով հակադիր է վերը ներկայացվածին, սակայն ըստ էության դրա զուգահեռն է։

---

12 Նույն տեղում։ Լիալուսնի «անբարենպաստ» լինելու ժողովրդական ընկալումը բնորոշ էր նաև առաջավորասիական մշակույթներին։ Իբրև ապացույց կարող է ծառայել հրեական շաբաթը (հայտնի է, որ հրեաների մեջ այդ օրը արգելվում էր որևէ գործ սկսել), որն իր ստուգաբանությամբ հանդում է աքադական šabbattum կամ šappattum-ին, որ նշանակում է «լիալուսին» կամ լուսնի փուլ (И. М. Дьяконов, Подразделение месяца в Передней Азии; в кн.: Э. Бикерман, Хронология Древнего мира, М., 1975, էջ 305)։ Մեր գրանցած դաշտային նյութերը վկայում են, որ շաբաթ օրը հայերի մեջ նույնպես բարենպաստ չէր որևէ գործ սկսելու համար։ Մյուս կողմից հետաքրքիր է, որ այլ մշակույթներում (օրինակ՝ մայաների) լիալուսինը համարվում էր բարենպաստ ժամանակաշրջան (Ю. Кнорозов, Иерографические рукописи у майя, М., 1975, էջ 243)։

13 Ե. Լալայան, Նոր-Բայազետ (ԱՀ, XVII, Թիֆլիս, 1908, էջ 94)։

14 Ե. Լալայան, Վարանդա (ԱՀ, Բ, Թիֆլիս, 1897, էջ 216—221)։

15 Հայերի ժողովրդական հավատալիքներում աչքի հմայելու ունակության հավատը հայտնի է ազգագրական գրականությունից (А. А. Одабашян, Народные верования армян по письменным талисманам, «Кавказский этнографический сборник», М., 1976, вып. VI).

16 Ե. Լալայան, Նոր-Նախիջևան (ԱՀ, IX, Թիֆլիս, 1902, էջ 47—48)։

17 Գ. Ստեփանյան, Սևանի ազգագրությունը (ԱԲԱ, էջ 32)։

Ըստ հայկական ժողովրդական հավատալիքների, լուսինը օժտված էր նաև վնաս հասցնելու կարողությամբ։ Սա հատկապես կապվում էր երեխաների առողջության հետ։ Երեխաների հիվանդանալը հաճախ բացատրվում էր նորածնին լուսնին ցույց տալու ծեսի անտեսմամբ, որի հետևանքով լուսինը, ըստ ժողովրդական ընկալման, «բարկանում էր», «խփում էր», այսինքն՝ «անիծում էր»։ Լուսնի կողմից ուղարկված հիվանդությունը կոչվում էր նորեցց կամ նորեցցf[18]։

Հայտնի է մասնավորապես, հետևյալ սովորույթը. Ջավախքում լուսնի «զայրույթից» երեխային փրկելու նպատակով նրան գրկում էին և մատնացույց անելով լուսինը, ասում. «քեռիդ, քեռիդ»[19]։ Իսկ Բուլանըխում քառասունքից հետո նորածնին դուրս էին բերում նորալուսնի ժամանակ և շուռումուռ տալով գլուխն անվանում էին հետույք և հակառակը[20]։ Լուսնին խաբելու այս խոսքային շփոթությունը հիշեցնում է կյանքը պահպանելու նպատակով երեխային օտար անվամբ կոչելու սովորույթը (հաճախ ընդունված էր երեխային կոչել մահմեդականի անունով)։ Վերը ասվածի առումով ուշադրավ է հետևյալ սովորույթը։ Սիսիանի շրջանի Լոր գյուղում նորածնի լվացքը հավաքում էին մինչև լուսնի հայտնվելը, որպեսզի երեխաներին զերծ պահեն հիվանդությունից[21]։

Ըստ ժողովրդական պատկերացումների, եթե լուսինն արդեն «վնասել էր» երեխային, ապա նրան չար ուժերից աղատելու, «բուժելու» համար կանգնեցնում էին տան սյան մոտ և մեջքի մակարդակի բտրձրությամբ երեք մեխ խփում սյանը։ Նույն նպատակով՝ Ջավախքում, նորալուսնի ժամանակ, չորեքշաբթի կամ ուրբաթ օրը հայրը և մայրը գրկելով երեխային, բարձրանում էին տան կտուրը։ Հայրը երեխային դնում էր թիու վրա և տալով մորը, ասում. «Քուկդ է նե՝ քեզի, իմս է նե՝ լից տուս»։ Մայրը սկզբում գրկում էր երեխային, հետո դնում թիու վրա և նույն ձևով վերադարձնում հորը[22]։

Լուսնային հիվանդությունից բուժելու առավել տարածված միջոցներ էին համարվում հատուկ պահպանակները, որոնք պատրաստվում էին պղնձե կամ արծաթե դրամներից՝ լուսնի մահիկի ձևով։ Լուսնային պահպանակները, որոնք կոչվում էին «նոր»[23], լինելով հայերի մինչքրիստոնեական հավատալիքների արտահայտությունը, քրիստոնեության օրոք ոչ միայն կենցաղում կենսունակ էին, այլև պատրաստվում էին գյուղական քահանաների կողմից[24]։ Ազգագրական աղբյուրները վկայում են, որ որոշ շրջաններում պահպանակներ պատրաստելու պարտականությունը դրվում էր որևէ սուրբ համարվող ընտանիքի վրա, առանց քահանայի միջամտության[25]։ Դաշտային նյութերից

---

18 Բ ե ն ս ե, Բուլանըխ կամ Հարք դավո (ԱՀ, Ե, Թիֆլիս, 1899, № 1, էջ 129)։ Պատահական չէ, որ «լուսնային հիվանդություն» անունը ածանցված է լուսնի փոքր փուլի անջանմանը։ Նշենք, որ ըստ ժողովրդական ընկալման, հիվանդությունը այնքանով կարող էր համարվել լուսնային, որքանով պահպանված էր լուսնի հետ կապված սովորութական ծիսակարգը։

19 Ե. Լ ա լ ա յ ա ն, Ջավախք (ԱՀ, Ա, Շուշի, 1895, էջ 274)։

20 Բ ե ն ս ե, նշվ. աշխ., էջ 129։

21 Հեղինակի 1977 թ. դաշտային նյութերից (ԱԲԱ, տետր № 2)։

22 Ե. Լ ա լ ա յ ա ն, Ջավախք, էջ 274։

23 «նոր»-ը այստեղ հանդես է գալիս իբրև նորալուսինը խորհրդանշող իկոնիկ նշան։

24 Բ ե ն ս ե, նշվ. աշխ., էջ 129—130։

25 Ե. Լ ա լ ա յ ա ն, Սիսիան (ԱՀ, Գ, Թիֆլիս, 1898, № 1, էջ 231—232)։

հայտնի է, որ լուսնային պահպանակներ պատրաստում էին նաև դարբինները, իսկ հետագայում այդ սովորույթը ավելի և պարզեցվում. պահպանակ կարող էր պատրաստել յուրաքանչյուր մարդ, եթե անհրաժեշտ էր համարում[26]։ Որոշ դեպքերում երեխաներին «բուժում էին» նրանց դեմքին պղնձի տակի մրով խաչ նկարելով[27]։ Այսպիսով, ժողովրդական պատկերացմամբ, լուսինն օժտված էր խորհրդավոր ուժով և ունակ էր հիվանդություններ բուժելու։ Այս առումով ուշագրավ են XIX—XX դդ. գրանցված հմայական գործողությունները, որոնք ուղեկցվում էին կախարդանքի խոսքերով։ Օրինակ՝ գորտնուկ բուժելու նպատակով մարդիկ ձեռքին բռնում էին աղ և շշնջում կախարդանքի խոսքեր կամ էլ՝ դրի առնելով դրանք ձվի կեղևի վրա, թաղում էին հինգ կամ յոթ ճանապարհների խաչմերուկում, ասելով.

Լիսին նոր,
Գորտնուկ չոր,
Օրթում ուտեմ,
Թոք չուտեմ։

Այ աղ, դու այստեղ հալվի,
Այ գորտնուկ, դու ըտտի չորացի[28]։

Տվյալ դեպքում հմայության ազդեցությունն իրագործվում էր կախարդական խոսքի և գործունեության միջոցով, որոնք միասնական ծեսի փոխկապակցված տարրերն են։

Լուսնի երբեմնի պաշտամունքի հետ առնչվող ժողովրդական հավատալիքների և պատկերացումների համալիրից առավել լիակատար են լուսնի խավարմանը վերաբերող ազգագրական տեղեկությունները։ Հայերի պատկերացումներում լուսնի խավարումը ընկալվում էր իբրև խոշոր աղետ, պատերազմի նախանշան, թագավորի մահ և այլն, որը, հավանաբար, գալիս էր հնագույն ժամանակներից, երբ լուսնի խավարումը թագավորի, առաջնորդի բռնի մահվան ազդակ-խորհրդանիշ էր[29]։

Ազգագրական աղբյուրները վկայում են լուսնի խավարումը բացատրող մի շարք տարբերակների մասին։ Ըստ ամենատարածված ավանդության, սատանաները շրջապատում են լուսատուն, փորձում են խեղդել նրան՝ հավատացնելով, որ իրենք են տիրում տիեզերքին[30]։ Մեկ այլ ավանդության մեջ խավարումը բացատրվում է վիշապի հայտնվելով, որը փորձում է բռնել և կուլ տալ լուսատուին։ Որոշ դեպքերում վիշապի փոխարեն հիշատակվում է հսկայական թռչունը, որը ծածկում է լուսատուին[31]։

---

26 Հեղինակի դաշտային նյութերից (Սիսիան, Լոր, 1977)։

27 Բ ե ն ս ե, նշվ. աշխ., էջ 129—130։

28 Ե. Լ ա լ ա յ ա ն, Գանձակի դավառ (ԱՀ, Զ, էջ 343)։

29 Э. Церен, Лунный бог, М., 1976, էջ 100։ Վերն ասվածի առումով հետաքրքիր է, որ ըստ ժողովրդական պատկերացումների կային մարդիկ, ովքեր կարող էին գուշակել, թե լուսնի խավարումը «բարի է», թե հակառակը։ Հեղինակի դաշտային նյութերից։

30 Е. Мелик-Шахназаров, Из поверий, предрассудков и народных примет армян зангезурского уезда («Сборник материалов для описания местностей и племен Кавказа (այսուհետև՝ СМОМПК), вып. XVII, Тифлис, 1893, отд. II, էջ 194)։

31 Հ. Մ ա ր դ ա ր յ ա ն, նշվ. աշխ., էջ 129—130։

Լուսնի խավարումը (նաև՝ արևինը) պատկանելով գերբնական երևույթների շարքին, ինչպիսիք են ջրհեղեղը, երկարատև երաշտը, հատուկ երանգ է ունեցել ժողովրդի գիտակցության մեջ։ Ըստ որոշ ավանդույթների, լուսատուին փորձում են կուլ տալ վիշապը կամ հսկայական հավքը։ Այս առասպելական կենդանիները, ինչպես հայտնի է, մարմնավորում են քաոսը։ Այստեղից էլ լուսնի խավարման առասպելը կարելի է ընկալել իբրև քաոսի կողմից տիեզերքի կլանման վաղեմի նկարագրության արտահայտություն[32]։

Լուսնի խավարումը բացատրող ավանդությունների մեջ հանդիպում ենք նաև նրա մարդեղայնացման հետ առնչվող նյութերի։ Ըստ ավանդության, արևը աղջիկ էր, իսկ լուսինը՝ տղամարդ, տեսնելով արևի գեղեցկությունը, լուսինը խելքը կորցնում է և տեղի է ունենում նրա խավարումը[33]։

Վերը նկարագրված լուսնի խավարումը բացատրող ավանդությունների համադրումը ցույց է տալիս, որ հայերը XIX դ. վերջում և XX դ. սկզբում լուսնի վերաբերյալ մի միասնական առասպել չունեին։ Սա, ըստ երևույթին, պայմանավորված էր նրանով, որ այդ ավանդություններից յուրաքանչյուրը մի կողմից արտացոլում էր որոշակի պատմական ժամանակաշրջանի և որոշ առումով՝ հայկական էթնոսի առանձին տեղային խմբերի հավատալիքները, մյուս կողմից՝ սկզբնական հնագույն տարբերակի կորստով։

Լուսնի խավարման ժամանակ տեղի ունեցող ծիսական գործողությունները կարծես լուսատուին «հովանավորող» բնույթ էին կրում։ Մարդիկ ապակու միջով նայում էին և իբր տեսնում սատանայի ոտքերը, ձեռքերը։ Հավատում էին, որ լուսատուն «տանջվում է» և պետք է «փրկել խեղճին»[34]։ Սա արվում էր աղմուկ բարձրացնելով, որը օրինաչափ էր բոլոր ժամանակների և ազգագրական շրջանների համար։ Աղմկում էին ամենատարբեր ձևերով՝ քարեր, պղնձե ամաններ էին խփում իրար, հրացան արձակում, եկեղեցու զանգերը հնչեցնում[35]։ Պատահական չէր, որ հաճախ աղմուկ էին բարձրացնում մետաղե առարկաներով (մետաղի սրբագործող դերը ընդունված էր հայերի մեջ)։

Լուսնի «պաշտպանության» ծիսակատարությունը ցույց է տալիս, որ ժողովուրդը հավատում էր ծիսահմայական գործողությունների միջոցով լուսինը չար ուժերից փրկելուն, այսինքն՝ հավատում էր հմայության ազդեցությանը։ Մյուս կողմից՝ հետաքրքիր է, որ բոլոր գործողությունները կատարվում էին շուտափույթ, ասես, սովորույթի ուժով, որ կարծես վկայում է այն մասին, թե շատ մասնակիցների համար այն ձևական բնույթ էր կրում, քանի որ հայտնի էր խավարման ելքը։ Այս առումով քննելով լուսնի խավարման ժողովրդական բացատրությունները, տեսնում ենք, որ դրանք ձևավորվել են երևույթի շրջելիությանը տեղյակ մարդու տեսակետից։

Հետագայում քրիստոնեական եկեղեցին ջանացել է արմատախիլ անել խավարման հետ կապվող ծիսակարգը։ Այսուհանդերձ, ազգագրական նյութերը վկայում են, որ վերը նշված գործողությունները հարատևել են նաև քրիստոնեության օրոք (որոշ առումով փոխակերպվելով, ինչպիսին լուսնի

---

32 Е. Мелетинский, Поэтика мифа, М., 1976, էջ 206։

33 Հ. Մուրադյան, նշվ. աշխ., էջ 113։

34 Г. Осипов, Селение Даш-Алты Шушинского уезда Елисаветпольской губернии (СМОМПК, вып. XXV, отд. II, Тифлис, 1898, էջ 134)։

35 Նույն տեղում։

խավարումն է, որ կապվում էր մարդկության մեղավորության քրիստոնեական գաղափարի հետ)։ Այս պատճառով էլ խավարման ժամանակ մարդիկ հավատքի էին կոչվում, խոստովանում էին իրենց մեղքերը, ծնկաչոք աղոթում[36]։

Հայկական ժողովրդական հավատալիքներում լուսնի պաշտամունքի՝ վերապրուկները քննելիս անհնար է անտեսել այն ավանդությունները, որոնցում լուսնին բնորոշ են մարդկային գծեր։ Բնության անձնավորումը կրոնական մտածողության որոշակի փուլերից է։ Բոլոր հայտնի մշակույթներում լուսինը (նաև արևը) անձնավորվում էր և տարբերակվում ըստ սեռի։ Ժողովրդական պատկերացմամբ, լուսինը հաճախ համարվել է տղամարդ, արևի եղբայրը, Երբեմն և «հովանավորը»։ Ըստ ավանդության, արևը մի անգամ հրաժարվել է ցերեկը դուրս գալուց, պատճառաբանելով, որ ամաչում է մարդկանցից։ Լուսինը (եղբայրը) նրան ավել է յոթ կապ ասեղ և պատվիրել ծակել իրեն նայողների աչքերը[37]։ Լուսնի և արևի անձնավորումը տեղի է տվել մի շարք ավանդությունների, որտեղ նրանց հարաբերություններին բնորոշ են մարդկային հատկանիշներ. Այսպես՝ մի անգամ մայրը դիմում է արևին և լուսնին, որպեսզի ջուր բերեն իր համար։ Առաջինը վերադարձողին նա խոստանում է օրհնել։ Եղբայրը (լուսինը) առաջինն է հասնում աղբյուրին և կուժը դնում ջրի տակ։ Բայց արևը (քույրը), ցանկանալով ինքը ստանալ մոր օրհնությունը, ծածուկ ծակած է լինում եղբոր կուժը. լուսինը վերադառնում է մոր մոտ դատարկ կժով, նրանից հետո հասնում է արևը և ստանում մոր օրհնությունը[38]։

Արևի և լուսնի մասին եղած տարբեր ժողովուրդների ավանդությունները շատ ընդհանուր գծեր ունեն։ Այդ ավանդություններից շատերում լուսինը նախապես մարդ է եղել, ապրել է երկրի վրա, և ապա իբրև նախահայր, կուլտուրական հերոս բարձրացել է երկինք, որտեղից շարունակել է տնօրինել մարդկային գործերը[39]։ Հայկական ժողովրդական ավանդությունների և տիեզերական պատկերացումների մեջ աղոտ է դրսևորվում լուսնի դերը իբրև երբեմնի կուլտուրական հերոսի։ Այս առումով ուշագրավ է լուսնին նվիրված աղոթքը, որտեղ նորած լուսնին դիմում են իբրև պատանու.

Նոր, նոր, նորավոր,
Կանաչ, կարմիր թագավոր,
Ծեր գացիր, տղա եկար,
Հեզր աշխարքեն ինչ խաբրիկ բերիր։

Աշխարքին՝ խեր ու խաղաղութեն,
Թագավորներուն՝ բարիշութեն,
Մահին՝ թանկութեն,
Հացին՝ էժնութեն,
Իմ տղեկներուն՝ արևշատութեն
Իմ հոգուն՝ արքայութեն[40]։

---

36 Ա. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 436։ Նաև՝ հեղինակի գրանցած նյութերից (Սիսիան, Լոր, 1977)։

37 Ե. Վալայան, Ջավախք, էջ 348։ Г. Осипов. նշվ. աշխ., էջ 134։

38 Հ. Մուրադյան, նշվ. աշխ., էջ 113։

39 W. J. Olcott, Sun Lore of all ages, New-York, 1867, էջ 38։

40 Բենսե, նշվ. աշխ., էջ 32։

Հայերի՝ լուսնի հետ առնչվող վերը քննված բոլոր ավանդությունները, հավատալիքները և պատկերացումները վկայում են նրանց կենցաղում լուսնի ունեցած կարևոր դերը և մասնավորապես նրա պաշտամունքը։ Դրանք միաժամանակ ցույց են տալիս, որ XIX դ. վերջում և XX դ. սկզբում հայ ժողովրդի մեջ գոյություն չի ունեցել լուսնին նվիրված ցայտուն արտահայտվող կրոնապաշտամունքային ծիսակարգ։

ЛУНА В НАРОДНЫХ ВЕРОВАНИЯХ И ОБЫЧАЯХ АРМЯН

(КОНЕЦ XIX—НАЧАЛО XX ВВ.)

НВАРД ЕРНДЖАКЯН

Резюме

Быт армянского крестьянина во многом был приурочен к фазам луны. Интересно отметить, что несмотря на противоречивое временное упорядочение лунного месяца, в целом новолуние в народных верованиях армян считалось более благоприятным периодом, .чем полнолуние. Народное восприятие благоприятности новолуния породило множество магических действий, направленных на приумножение богатства, укрепление здоровья и т. д. Часто магический эффект достигался с помощью словесной формулы и физического действия, выступающих в качестве взаимосвязанных актов обряда в целом.

Наиболее полно сохранился этнографический материал о народных поверьях, связанных с затмением луны, сопровождавшимся обрядовыми магическими действиями в целях «спасения» и светила.

Рассмотренные нами народные предания, поверья, обычаи свидетельствуют, в частности, о наличии культа луны. Однако они показывают, что в XIX—XX вв. не существовало ярко выраженной цельной культовой обрядности, посвященной луне.